ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ք.Երևան «24» 10 2025թ № 3206-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ, 33-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռուզաննա Սարգսի Թարվերդյանի դիմումը՝

հրամայում եմ.

1. Նշանակել ծառայողական քննություն՝ շահերի բախման վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար:

2. Ծառայողական քննություն անցկացնելու դեպքը՝

ԵԴ2/2604/02/25 քաղաքացիական գործի շրջանակներում, որպես Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի կողմից դատարանում պատասխանողի ներկայացուցիչ հանդիսացող Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պետական գրանցամատյանների բաժնի պետ Արմենուհի Շահինյանի և մյուս կողմից «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ-ն ներկայացնող Արա

Աբգարյանի՝ դատարանում, որպես հայցվորի ներկայացուցիչ լինելը և վերջիններիս ամուսնական կապի մեջ գտնվելը:

3. Ծառայողական քննությամբ պարզաբանման ենթակա հարցը և հանգամանքները՝

1) Ի՞նչն է Արմենուհի Շահինյանի կողմից շահերի բախման կանոնները խախտելու և դրա մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու պատճառը:

4. Ծառայողական քննության վարումը իրականացնել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողի կողմից:

5. Ծառայողական քննության անցկացման նպատակով հանձնարարել Նախարարության անձնակազմի կառավարման վարչության բարեվարքության հարցերով կազմակերպչին մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ծրագրի միջոցով ձևավորել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով:

6. Ձևավորված էթիկայի հանձնաժողովի անդամների ցանկը համարել սույն հրամանի բաղկացուցիչ մաս:

2025-10-24 17:24:07 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Ձևավորված էթիկայի հանձնաժողովի անդամների ցանկ

Նախագահ՝

1) Սաղաթել Պետրոսյան Անուշավանի	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության պետ.

Անդամներ՝

2) Հայսեր Գասպարյան Անուշավանի	Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ.
3) Էլենա Սարգսյան Սլավիկի	Էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր իրավաբան.
4) Նորայր Սահակյան Հրայրի	Փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ.
5) Սոնա Բարսեղյան Լավրենտի	Փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ:

Հ/5571

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «24» 11 2025թ N 3605-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 3206-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով ծառայողական քննության անցկացման նպատակով ստեղծված էթիկայի հանձնաժողովի նախագահի 2025 թվականի նոյեմբերի 21-ի զեկուցագիրը՝

Հրամայում եմ

1. Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի N 3206-Ա հրամանով նշանակված ծառայողական քննության ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառյալ:

Ստորագրող
ՀԱՅԿԱՀ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

2025-11-24 17:13:56 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ՀԱՅԿԱՀ ՆԱՍԻԲՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻԹԻՎ 3206 ՀՐԱՄԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ք. Երևան

29.12.2025թ.

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 3206 հրամանով նշանակվել է ծառայողական քննություն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պետական գրանցամատյանների բաժնի պետ Արմենուհի Շահինյանի կողմից շահերի բախման վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար:

Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի (էլեկտրոնային ծրագրի) միջոցով ձևավորվել է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

1) Սաղաթել Անուշավանի Պետրոսյան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ՋՄՀԹՎՆ վերահսկողության վարչության պետ (Հանձնաժողովի նախագահ),

2) Հայսեր Անուշավանի Գասպարյան Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ,

3) Էլենա Սլավիկի Սարգսյան ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր իրավաբան

4) Նորայր Հրայրի Սահակյան ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ,

5) Սոնա Լավրենտի Բարսեղյան ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ:

Ծառայողական քննության շրջանակներում պարզաբանման ենթակա հարցն և հանգամանքները՝ Արմենուհի Շահինյանի կողմից շահերի բախման կանոնները խախտելու և դրա մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու պատճառը:

Ծառայողական քննության ընթացքում բացատրություն ներկայացնելու համար ծանուցվել է Արմենուհի Շահինյանը, ի պատասխան որի սույն թվականի դեկտեմբերի 19-ին Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի (էլեկտրոնային ծրագրի) միջոցով ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության 2025 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ EJ-4426-2025 Ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքը:

Միաժամանակ, 2025 թվականի դեկտեմբերի 23-ին ծառայողական քննության նյութերին ծանոթացման փուլում Արմենուհի Շահինյանի կողմից Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի (էլեկտրոնային ծրագրի) միջոցով ստացվել է հետևյալ բացատրությունը.

«Հարգելի պարոն Պետրոսյան,

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 3206 հրամանով նշանակված ծառայողական քննության վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Ես՝ Արմենուհի Գևորգի Շահինյանս, չեմ գտնվում Արա Աբգարյանի հետ ամուսնական կապի մեջ (ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքը կցվում է): Հետևաբար, դրա մասին գրավոր հայտարարություն ներկայացնել չէի կարող:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել»: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «8. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում որդեգրված), ծնողը (այդ թվում որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը,

տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները»:

Ինչպես արդեն վերը նշվեց ես և Արա Աբգարյանը չենք գտնվում ամուսնական կապի մեջ, հետևաբար Օրենքի վերը նշված դրույթների համաձայն չենք հանդիսանում փոխկապակցված անձինք:

Ինչ վերաբերվում է իմ կողմից շահերի բախման կանոնները խախտելուն, ապա Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

2. Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը»:

Այսինքն, որպեսզի առկա լինի շահերի բախման իրավիճակ, անհրաժեշտ է Օրենքով սահմանված անձանց փոխկապակցված լինելու պայմանի առկայությունը, որը տվյալ դեպքում բացակայում է:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ակնհայտ է, որ ԵԴ2/2604/02/25 քաղաքացիական գործի շրջանակներում ես և Արա Աբգարյանը չենք հանդիսացել

փոխկապակցված անձինք, հետևաբար շահերի բախում առկա չէ և իմ կողմից որևէ խախտում կատարված չէ:

Առդիր՝ ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքը, 1 թերթ:

Հարգանքով,

Արմենուհի Շահինյան»

Բացի այդ, սույն թվականի դեկտեմբերի 25-ին Հանձնաժողովի անդամ Էլենա Սարգսյանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով նույնպես ստացվել է վերը նշված բացատրությունը հետևյալ ուղեկցող գրությամբ.

«Հարգելի տիկին Սարգսյան,

Տեղեկացնում եմ, որ իմ՝ Արմենուհի Գևորգի Շահինյանիս նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, ծառայողական քննության համար թիվ 2688:

17.12.2025թ. ծառայողական քննություն վարողի կողմից էլեկտրոնային հարթակի միջոցով ստացել եմ ծանուցագիր առ այն, որ մինչև 19.12.2025թ. անհրաժեշտ է ներկայացնել բացատրություն: 19.12.2025թ. էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացրել եմ բացատրություն և կցել եմ 1 էլեկտրոնային ֆայլ: 24.12.2025թ. ծառայողական քննություն վարողի կողմից ավարտվել է ծառայողական քննությունը և կցվել են բոլոր փաստաթղթերը: Սակայն հարթակում բացակայում է իմ կողմից ներկայացված բացատրությունը, ինչպես նաև ծառայողական քննություն վարողին և հանձնաժողովին անդամներին հասանելի չէ իմ ներկայացված բացատրությունը:

Քանի որ էլեկտրոնային հարթակում այլևս հնարարվոր չէ ներկայացնել վերը նշված բացատրությունը, ուստի Ձեզ՝ որպես հանձանժողովի անդամ, ուղարկում եմ իմ կողմից ներկայացված բացատրությունը, կից ֆայլը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ առաջացած խնդրի վերաբերյալ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել եմ նաև Քաղաքացիական ծառայության գրասենյակին:

Կանխավ շնորհակալություն,»:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2025 թվականի դեկտեմբերի 22-ին Հանձնաժողովի նախագահի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարին միջնորդություն է

ներկայացվել՝ ծառայողական քննության շրջանակներում Արմենուհի Շահինյանի անձնական գործը տրամադրելու վերաբերյալ:

Վերը նշված միջնորդությունը բավարարվելուց հետո, Հանձնաժողովը ծանոթացել է անձնական գործին, միաժամանակ սույն ծառայողական քննության նյութերին է կցվել 2018 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԲԱ065148 Ամուսնության պալատ ՔԿԱԳ տարածքային բաժնի Ծննդի մասին պետական վկայականը:

Գնահատելով գործում առկա փաստաթղթերը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում համադրելով ծառայողական քննության արդյունքներով ձեռք բերված փաստական հանգամանքները՝ կարելի է փաստել, որ ԵԴ2/2604/02/25 քաղաքացիական գործի շրջանակներում, որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի կողմից դատարանում պատասխանողի ներկայացուցիչ հանդիսացել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պետական գրանցամատյանների բաժնի պետ Արմենուհի Շահինյանը և մյուս կողմից «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ն նել ;կայացնող Արա Աբգարյանը, որպես հայցվորի ներկայացուցիչ:

Միաժամանակ, 2018 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԲԱ065148 Ամուսնության պալատ ՔԿԱԳ տարածքային բաժնի Ծննդի մասին պետական վկայականի համաձայն՝ 2018 թվականի դեկտեմբերի 11-ին ծնված Աիդա Արայի Աբգարյանի մայրն է՝ Արմենուհի Գևորգի Շահինյանը, իսկ հայրը՝ Արա Համլետի Աբգարյանը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են՝ պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք:

ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 697-Ն որոշմամբ սահմանված քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 43-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայողը պարտավոր է իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում, կամ որոնց առկայության պայմաններում քաղաքացիական ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:

Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

Կանոնագրքի 44-46-րդ կետերի համաձայն՝ քաղաքացիական ծառայողն իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է խուսափել այնպիսի գործողության կատարումից կամ որոշման կայացումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել:

Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ կամ գործողություններ իր անձնական շահերի և իր պաշտոնից ու քաղաքացիական ծառայողի կարգավիճակից բխող շահերի միջև հնարավոր բախումը կանխելու համար:

Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ցանկացած շահերի բախման դեպքում այդ մասին տեղեկացնել իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, կատարել բարեվարքության հարցերով կազմակերպչի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ցանկացած վերջնական որոշում՝ խնդիրը լուծելու համար:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Արմենուհի Շահինյանը ձեռնպահ չի մնացել շահերի բախման իրավիճակում ԵԴ2/2604/02/25 քաղաքացիական գործի շրջանակներում գործողություն կատարելուց (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում և այլն) և չի զեկուցել անմիջական ղեկավարին շահերի բախման վերաբերյալ:

3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավական հիմքերը.

«Հանրային ծառայության մասին» օրենք

ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 697-Ն որոշում

ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշում

4. Եզրահանգում:

Ուսումնասիրելով և գնահատելով գործում առկա փաստաթղթերը, համադրելով ծառայողական քննության արդյունքներով ձեռք բերված փաստական հանգամանքները կարող ենք փաստել, որ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պետական գրանցամատյանների բաժնի պետ Արմենուհի Շահինյանի կողմից տեղի է ունեցել շահերի բախման կանոնների խախտում, որի համար պատճառ է հանդիսացել Օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դրույթների սխալ մեկնությունը:

էթիկայի հանձնաժողովի նախագահ՝ Սաղաթել Անուշավանի Պետրոսյան

էթիկայի հանձնաժողովի անդամներ՝ Հայսեր Անուշավանի Գասպարյան

Էլենա Սլավիկի Սարգսյան

Նորայր Հրայրի Սահակյան

Սոնա Լավրենտի Բարսեղյան

Հ/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «05» 01 2026թ № 4/4-Հ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 23-Գ34.1-18.6-Ղ4-1) ԱՐՄԵՆՈՒՀԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, 3-րդ, 6-րդ, 10-րդ մասերով, 35-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 3-րդ, 10-րդ ենթակետերով, հիմք ընդունելով էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի N 3206-Ա հրամանը և ծառայողական քննության անցկացման նպատակով ձևավորված էթիկայի հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի եզրակացությունը՝

Հրամայում եմ

1. Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի պետական գրանցամատյանների բաժնի պետ (ծածկագիրը՝ 23-Գ34.1-18.6-Ղ4-1) Արմենուհի Գևորգի Շահինյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2026-01-05 16:33:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ